ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Ն.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

Ժամանակակից մանկավարժության կարևոր հիմնախնդիրներից է սովորողների անձի ձևավորման ու զարգացման հիմնահարցը: Մարդու զարգացումը բարդ, երկարատև ու հակասական գործընթաց է, մարդու մեջ քանակական և որակական փոփոխությունների գործընթաց, որի արդյունքը մարդու կայացումն է որպես սոցիալական էակ: Մարդու օրգանիզմում փոփոխություններ տեղի են ունենում ողջ կյանքի ընթացքում, այնուամենայնիվ այդ փոփոխություններն առավել ինտենսիվ բնույթ են կրում մանկության և պատանեկության տարիներին: Անձի զարգացման վրա ազդող գործոնների շարքում իր ուրույն տեղն ունի միջավայրը՝ հատկապես կրթական միջավայրը: Կրթական միջավայրն առաջնահերթ դիտարկվում է որպես սոցիալ-մշակութային միջավայրի ենթահամակարգ՝ սոցիալական, նյութական և հոգևոր պայմանների, պատմականորեն ձևավորված գործոնների, հանգամանքների ու իրավիճակների ամբողջություն, այսինքն՝ անձի ձևավորման ու զարգացման համար հատուկ կազմակերպված մանկավարժական պայմանների ամբողջականություն: Կրթական միջավայր ասելով հասկանում ենք. «անձի զարգացման ու ձևավորման ազդեցությունների և պայմանների համակարգ, ինչպես նաև զարգացման համար անհրաժեշտ հնարավորություններ, որոնք ընդգրկվում են սոցիալական և տարածական-օբյեկտիվ միջավայրում» [1, էջ 145]:

Այսպես, կրթական միջավայրը կարող է բնութագրվել որպես կրթական հաստատությունում իրար հետ փոխկապակցված սոցիալական, մշակութային, ինչպես նաև հատուկ կազմակերպված հոգեբանական և մանկավարժական պայմանների ամբողջություն, որի փոխազդեցության արդյունքում տեղի է ունենում անձի ձևավորում և զարգացում: Կրթական միջավայրը, ըստ հայտնի հոգեբան-մանկավարժ Վ.Ա.Յասվինի, դիտարկվում է որպես. «պայմանների, ազդեցությունների և հնարավորությունների ամբողջություն, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել սովորողների հետաքրքրություններն ու ունակությունները և կրթական գործընթացում ապահովել սովորողների ակտիվ դիրքորոշումը՝ նպաստելով նրանց անձի զարգացմանն ու ինքնազարգացմանը» [3, էջ14]:

Կրթական միջավայրի կարևորության, սովորողների անձի զարգացման գործում դրա նշանակալի ազդեցության հիմնահարցը ոչ թե մեր օրերում է դարձել ուսումնասիրությունների առարկա, այլ տարիներ շարունակ եղել է հոգեբանների ու մանկավարժների ուշադրության

կենտրոնում: Այս ոլորտի ուսումասիրությունների մեջ մեծ ներդրում ունի 20-րդ դարի հայտի հումանիստ մանկավարժ Յանուշ Կորչակը: Նա, կարևորելով կրթական միջավայրի դերը, նշում էր. «Ժառանգականության օրենքներից զատ, անհրաժեշտ է ուսումնասիրել նաև կրթական (դաստիարակչական) միջավայրը, այդ դեպքում, շատ հավանական է, որ բազմաթիվ հանելուկներ կգտնեն իրենց լուծումները» [2, էջ 46]: Մանկության աշխարհի արդյունավետ կազմակերպման հիմնախնդիրը Յ.Կորչակի համար եղել է առաջնահերթ նրա ողջ մանկավարժական գործունեության ընթացքում: Իր մանկավարժական համակարգի կառուցման ելակետը Յ.Կորչակը համարում էր երեխայի դաստիարակության սոցիալական միջավայրի պայմանների և բնույթի մանրակրկիտ ուսումնասիրությունն ու մեծահասակների և երեխաների միջև հարաբերությունների համակարգի փոխակերպումը՝ ի շահ երեխայի անձի զարգացման: Յ.Կորչակն իր «Ինչպես սիրել երեխային» մանկավարժական աշխատության մեջ (առաջին անգամ հրատարակվել է Վարշավայում 1919 թվականին) ներկայացրել է կրթական (դաստիարակչական) միջավայրի չորս հիմնական տեսակները՝ դոգմատիկ, գաղափարական, հանդարտ սպառման և արտաքին փայլի ու կարիերայի:

Դոգմատիկ միջավայրը բնութագրվում է ավանդույթով, հեղինակությամբ, կարգապահությամբ, կարգուկանոնով և բարեխիղճությամբ, լրջությամբ, հոգեկան հավասարակշռությամբ, ուժի և կայունության զգացումով, ինքավստահությամբ ու ինքնատիրապետմամբ, ինքնահաղթահարմամբ, աշխատանքը որպես օրենք, իսկ բարձր բարոյականությունը որպես հմտություն դիտարկելով, պասիվության աստիճանի խոհեմությամբ, իրավունքների և ճշմարտությունների միակողմանի անտեսմամբ և այլն: Դոգմա կարող են լինել հայրենիքը, եկեղեցին ու կրոնը, առաքինությունը և մեղքը, գիտությունը, հասարակական և քաղաքական աշխատանքը և այլն: Դոգմատիկ միջավայրի առավել արտահայտիչ օրինակներ են եկեղեցին և բանակը, ուժեղ կրոնական ավանդույթներ ունեցող ընտանիքը: Դոգմատիկ միջավայրում դաստիարակված երեխան առաջին հերթին բնութագրվում է պասիվության բարձր աստիճանով, անտարբերության վերածվող հանգստությամբ: Եթե արդեն ձևավորված ուժեղ անհատականությունը հայտնվում է նման միջավայրում, ապա նա կենտրոնանում է ուրիշի կամքին ու պարտադրանքին դիմակայելու ցանկության վրա և իր ջանքերն առավելապես ուղղում է աշխատանքային գործունեությանը:

Գաղափարական միջավայրին բնորոշ է մտքի ազատ թռիչքը, իմպուլսը, հոգու շարժումն ու ջերմությունը, ստեղծագործականությունն ու խանդավառությունը, բարությունն ու կամքը, հանդուրժողականությունը, դեպի ապագա հայացքը, հետաքրքրությունն ու վաղվա օրվա սպասումը, հարգանքը մարդկային մտքի նկատմամբ և այլն: Գաղափարական միջավայրը ձևավորվում է ստեղծագործական տարբեր խմբերում, հատկապես դրանց ձևավորման և

զարգացման սկզբնական փուլում: Գաղափարական միջավայրի ձևավորման ամենակարևոր պայմանը ստեղծագործական խմբում ավտորիտար առաջնորդի բացակայությունն է, ով պարտադրում է իր տեսակետը՝ անտեսելով կամ կոշտ քննադատելով ուրիշների կարծիքը: Գաղափարական միջավայրում ձևավորվում է անհատականություն, ով բնութագրվում է ակտիվությամբ ու շրջակա աշխարհի ակտիվ փոխակերպման ունակությամբ, բարձր ինքնագնահատականով, դատողությունների և գործողությունների ազատությամբ:

Հանդարտ սպառման միջավայրը բնութագրվում է հոգեկան հանգստությամբ, անհոգությամբ, զգայունությամբ, սիրալիրությամբ, բարությամբ, ներքին բարեկեցությամբ, ծուլությամբ, սովորությունների պահպանողականությամբ և այլն: Հանդարտ սպառման միջավայրում աշխատանքը երբեք չի ծառայում որևէ գաղափարի, չի դիտվում որպես կենսագործունեություն և նպատակ, այլ դիտարկվում է միայն որպես հարմարավետություն ու ցանկալի պայմաններ ապահովելու միջոց: Նման կրթական միջավայրում ձևավորվում է մի մարդ, ով սկզբունքորեն միշտ գոհ է իր ունեցածից: Նման անձի հիմնական առանձնահատկությունը կարելի է համարել կյանքի պասիվությունը, սթրեսի և պայքարի նկատմամբ անընդունակ լինելն ու անկարողությունը: Դժվարությունների և խոչընդոտների հանդիպելով՝ այդպիսի մարդը նախընտրում է հեռանալ դրանց լուծումից՝ շարունակելով թաքնվել իր պատրանքների աշխարհում, ինչպես խխունջն իր պատյանում:

Արտաքին փայլի և կարիերայի միջավայրին բնորոշ են սառը հաշվարկը և համառությունը, այլ մարդկանց արժեքների հմուտ շահագործումը, դեմագոգիկ կարգախոսները, ինքնագովազդման ճարտար վարվելակարգը, անհագ սնափառությունն ու ամբարտավանությունը, ստրկամտությունը, դժգոհությունն ու նախանձը, զայրույթն ու չարությունը և այլն: Նման միջավայրում երեխաներին չեն սիրում և չեն դաստիարակում, այստեղ նրանց միայն գնահատում են, իսկ փոխհարաբերություններում կորցնում կամ վաստակում են: Նման միջավայրում դաստիարակված երեխայի հիմնական հատկանիշներն են կեղծավորությունը և խորամանկությունը, շահամոլությունն ու կաշառակերությունը, բարձր կապերի միջոցով կարիերայի ձգտումը և այլն [3, էջ 15-18]:

Այսպիսով, ըստ կրթական միջավայրի Յ.Կորչակի տիպաբանության, դոգմատիկ միջավայրը բնորոշվում է ավանդույթների պահպանմամբ ու հեղինակության գերակայմամբ՝ ձևավորելով կարգապահ, բայց պասիվ սովորողներ: Գաղափարական միջավայրը ուղղված է բարձր ինքնագնահատական ունեցող անձի ձևավորմանն ու զարգացմանը, ով ակտիվորեն յուրացնում և փոխակերպում է շրջապատող աշխարհը, ով ազատ է և ակտիվ: Հանդարտ սպառման կրթական միջավայրը բնութագրվում է աշակերտների նկատմամբ բարյացակամ վերաբերմունքով, անհրաժեշտ խստության բացակայությամբ՝ ձևավորելով պասիվ ու

սթրեսային կյանքին դիմակայելու անկարող անձ: Կարիերայի միջավայրը ձևավորում է մրցունակություն, հաստատակամություն, ակտիվ պրագմատիզմ և անտարբերություն ուրիշների նկատմամբ: Դոգմատիկ կրթական միջավայրը նպաստում է երեխայի պասիվության և կախվածության զարգացմանը, գաղափարական (ստեղծագործական) կրթական միջավայրը նպաստում է ակտիվ երեխայի ազատ զարգացմանը: Հանդարտ կրթական միջավայրն ուղղված է ազատ բայց պասիվ երեխայի ձևավորմանն ու զարգացմանը և, վերջապես, կարիերայի կրթական միջավայրը նպաստում է երեխայի գործունեության զարգացմանը, բայց նաև կախվածությանը [4, էջ 80]:

Ամփոփելով կարող ենք նշել, որ կրթական միջավայրը անմիջականորեն ազդում է սովորողների անձի ձևավորման ու զարգացման վրա: Եվ եթե սովորողները ուսումնառության ընթացքում ներգրավված լինեն բոլոր չորս կրթական միջավայրերում, ապա ձեռք կբերեն հետագա ողջ կյանքի ընթացքում անհրաժեշտ որակներ, ինչպիսիք են նպատակադրումը, համառությունը, ինքնատիրապետումն ու կարգապահությունը, հանգստությունն ու բարությունը և այլն: Սովորողների անձի լիարժեք ձևավորման ու զարգացման համար նրանք պետք է նեգրավված լինեն կրթական բոլոր չորս տեսակի միջավայրերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եգանյան Գ.Գ., Մանկավարժական դիագնոստիկա / Գ. Եգանյան.- Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2020, 232 էջ:
2. Януш Корчак Как любить ребенка.- М: Изд. АСТ.- 2014.- 390 с.
3. Ясвин В.А. Образовательная среда: от моделирования к проектированию.- М.: Смысл.- 2001.- 365 с.
4. Ясвин В.А. Школьная среда как предмет измерения: экспертиза, проектирование, управление / В.А. Ясвин. — М.: Народное образование . - 2019.- 448 с.

THE INFLUENCE OF THE EDUCATIONAL ENVIRONMENT ON THE FORMATION AND DEVELOPMENT OF THE PERSONALITY OF STUDENTS

The environment, especially the educational environment, occupies a special place among the factors influencing the formation and development of the personality of students. In his main pedagogical work, Korczak distinguishes four types of educational environment: dogmatic, ideological, environment of serene consumption and environment of outward gloss and career. For full-fledged formation, the student must pass all four types of educational environments.

Keywords: *educational environment, influence, personality development, discipline, career, heredity.*